



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկար» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակում 28/20 ծածկագրով «Տաթևվ ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի կապիտալ վերանորոգման նախագծային աշխատանքներ» մրցույթի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2021

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն):

Մոնիթորինգի առարկան՝ Ընկերության կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

Մոնիթորինգի նպատակը՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2020 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 2021 թվականի հունվարի 29-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Տաթել ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի կապիտալ վերանորոգման նախագծային աշխատանքներ» բաց մրցույթ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների պլանի հիման վրա, հիմք ընդունելով Ընկերության կողմից հաստատված գնումների կարգի 7.4.2 կետը կազմակերպել և անցկացրել է «Տաթել ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի կապիտալ վերանորոգման նախագծային աշխատանքներ» բաց մրցույթ:

Հայտարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2020 թվականի հուլիսի 9-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2020 թվականի հուլիսի 27-ը: Մատակարարման պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվում այն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օր:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել երեք մասնակից՝ «Մոդուլ», «Ենթակառուցվածքներ» ՍՊԸ-ները և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը: Հարկ է նշել, որ մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները թերի են եղել: Մրցութային հանձնաժողովի կողմից ընկերություններին հնարավորություն է տրվել հայտում բացակայող փաստաթղթերը լրացնել: 2020 թվականի օգոստոսի 3-ին կայացած տեխնիկական առաջարկների գնահատման նիստի ընթացքում մրցութային հանձնաժողովի կողմից «Ենթակառուցվածքներ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է՝ համապատասխան մասնագիտական փորձառություն չունենալու պատճառով: Մյուս մասնակիցների ներկայացրած տեխնիկական առաջարկները գնահատվել են որպես հրավերի և գնումների ուղեցույցի պահանջներին համապատասխան և հնարավորություն է տրվել մասնակցել էլեկտրոնային եղանակով գնային առաջարկ ներկայացնելու փուլին: Ներկայացված գնային առաջարկները բերված են ստորև.

Ընկերության անվանումը	Ներկայացված գնային առաջարկները մլն դրամ, առանց ԱԱՀ
1	2
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	3,0
«Մոդուլ» ՍՊԸ	2,95

Հաղթող է ճանաչվել «Մոդուլ» ՍՊԸ-ն՝ հայտի գինը 2,95 մլն ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: Պայմանագիրը կնքվել է 2020 թվականի սեպտեմբերի 11-ին, մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման պահից 90 օր:

«Տարթվ ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի կապիտալ վերանորոգման նախագծային աշխատանքներ» բաց մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն գնման ընթացակարգի փաստաթղթերը և կատարվելիք աշխատանքների բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
2. Հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները բավարարող, ամենացածր գին առաջարկած մասնակիցը:
3. Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված պայմանագրի կնքման պահից 90 օր:



**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

Ընկերության անվանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Գնման անվանումը «Տարեկ ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի կապիտալ վերանորոգման նախագծային աշխատանքներ»

Գնման ծածկագիրը 28/20

Գնման ձևը Բաց մրցույթ

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
4 Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:
5 Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմել է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Հայտարարությունը հրապարակվել է նաև iTender և armtimes.com էլեկտրոնային կայքերում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
6 Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
7 Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
8 Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
9 Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

10	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
11	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
12	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
13 Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
14 Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
15 Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
16 Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
17 Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
18 Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
19 Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները: